# ԵՄ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆԸ

**Արդարադատության ոլորտին, հակակոռուպցիոն և իրավապահ ոլորտների բարեփոխումներին ուղղված ԵՄ աջակցությունը Հայաստանին հիմնականում տրամադրվել է բյուջետային աջակցության ձևաչափով, որը ներառում է ֆինանսական փոխանցումներ Հայաստանի պետական գանձապետարանին՝ զուգակցված հավելյալ տեխնիկական աջակցությամբ:**

## ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՐԵՔ ԾՐԱԳՐԵՐՆ ԵՆ՝

### 1. Աջակցություն Հայաստանի արդարադատության ոլորտի բարեփոխումներին

Իրականացման ժամանակաշրջան՝
**2024-2026**
(Փուլ 2)

Բյուջե՝ **€11.000.000**

**ՆՊԱՏԱԿ**

Աջակցել արդարադատության և հակակոռուպցիոն ոլորտներում, մասնավորապես բարեվարքության, հաշվետվողականության, անկախության, որակի, արդյունավետության և հատկապես խոցելի խմբերի համար հասանելիության ապահովման ուղղությամբ միջազգային չափանիշների ներդրմանը:

### 2. Աջակցություն Հայաստանի արդարադատության ոլորտի բարեփոխումներին

Իրականացման ժամանակաշրջան՝
**2020-2024**
(Փուլ 1)

Բյուջե՝ **€30.000.000**

**ՆՊԱՏԱԿ**

Նպաստել ավելի անկախ, թափանցիկ, հաշվետու, մատչելի և արդյունավետ դատական համակարգի ձևավորմանը՝ «Իրավական և դատական բարեփոխումների 2012–2016 թվականների ռազմավարական ծրագրին» համահունչ:

### 3. Աջակցություն Հայաստանի արդարադատության ոլորտի բարեփոխումներին

Իրականացման ժամանակաշրջան՝
**2014-2016**

Բյուջե՝ **€29.000.000**

**ՆՊԱՏԱԿ**

Աջակցել Հայաստանի արդարադատության ոլորտին՝ արդյունավետորեն ապահովելու իրավունքի գերակայությունը և պայքարելու կոռուպցիայի դեմ:

# ԵՄ ԸՆԹԱՑԻԿ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

## 1.Աջակցություն վիզաների ազատականացման գործողությունների ծրագրի իրականացմանը

Իրականացման ժամանակաշրջան՝ **2026-2028**

Ընդհանուր բյուջե՝ **€2.200.000**

**ՆՊԱՏԱԿ**

**1.** Ամրապնդել Ներքին գործերի նախարարության (ՆԳՆ) և համապատասխան կառույցների ռազմավարական համակարգումը, հաղորդակցությունը և ինստիտուցիոնալ կարողությունները՝ վիզաների ազատականացման գործողությունների ծրագրի արդյունավետ իրականացման նպատակով:
**2.** Զարգացնել Հայաստանի իշխանությունների գործառնական կարողությունները սահմանների համալիր կառավարման ոլորտում՝ ԵՄ լավագույն փորձին համապատասխան, այդ թվում՝ փաստաթղթերի անվտանգության, ինքնության կառավարման, ամբողջականության ապահովման և միջգերատեսչական համագործակցության ուղղություններով:

## 2. Աջակցություն ոստիկանության և քաղաքացիական պաշտպանության բարեփոխումներին՝ ՄԱԶԾ–ի և ԵԱՀԿ–ի հետ

Իրականացման ժամանակաշրջան՝ **2025-2028**

Ընդհանուր բյուջե՝ **€5.000.000**

**ՆՊԱՏԱԿ**

Գործում են արդյունավետ և հաշվետու ինստիտուցիոնալ մեխանիզմներ, իսկ ոստիկանության և փրկարար ծառայությունների գործունեությունն ու ծառայությունների մատուցումը լիարժեքորեն կազմակերպված են՝ եվրոպական և միջազգային չափանիշներին, նաև ԵՄ լավագույն փորձին համապատասխան:

## 3. Բարեփոխումների առաջխաղացում ընտրական համակարգերի թափանցիկ և ներառական կառավարման ոլորտում

Իրականացման ժամանակաշրջան՝ **2025-2027**

Ընդհանուր բյուջե՝ **€1.500.000**

**ՆՊԱՏԱԿ**

Նպաստել Հայաստանում առավել թափանցիկ, ներառական և վստահություն ձևավորող ընտրական գործընթացների զարգացմանը՝ միջազգային լավագույն փորձին համապատասխան, ինչը կբերի հանրային վստահության բարձրացմանը ժողովրդավարական կառավարման նկատմամբ, նաև Հայաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովի կարողությունների և անկախության ամրապնդմանը:

## 4. Անձնական տվյալների պաշտպանությանը Հայաստանում

Իրականացման ժամանակաշրջան՝ **2025 - 2026**

Ընդհանուր բյուջե՝ **€239.000**

**ՆՊԱՏԱԿ**

**1.** Անձնական տվյալների պաշտպանության ազգային վերահսկող մարմնի և այլ համապատասխան շահառուների կարողությունների զարգացում՝ Հայաստանում անձնական տվյալների պաշտպանության ապահովման համար:
**2.** Քաղաքականություն մշակողների, տվյալների սուբյեկտների, տվյալների վերահսկողների և մշակողների, ինչպես նաև լայն հասարակության շրջանում տվյալների պաշտպանության օրենսդրության վերաբերյալ իրազեկվածության բարձրացում:

## 5. Աջակցություն մարդու իրավունքներին ՄԱԶԾ–ի, ՅՈՒՆԻՍԵՖ–ի և ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հետ

Իրականացման ժամանակաշրջան՝ **2024-2027**

Ընդհանուր բյուջե՝ **€2.585.440**

**ՆՊԱՏԱԿ**

Ամրապնդել ազգային մարմինների կարողությունները՝ մարդու իրավունքների պաշտպանության գործում՝ հատուկ ուշադրություն դարձնելով ներառականությանը, թափանցիկությանը և գենդերազգայուն քաղաքականությունների մշակմանը:

## 6. Արդարադատության բարեփոխումների մոնիթորինգ Հայաստանում (Juremonia)

Իրականացման ժամանակաշրջան՝ **2024 - 2026**

Ընդհանուր բյուջե՝ **€760.000**

**ՆՊԱՏԱԿ**

Խթանել քաղաքացիական հասարակության մասնակցությունը արդարադատության ոլորտի բարեփոխումներին: ՔՀԿ ներկայացուցիչները հնարավորություն կունենան մեծացնելու իրենց ազդեցությունն արդարադատության ոլորտում իրականացվող բարեփոխումների վրա և նպաստելու համակարգային փոփոխությունների հաստատմանը:

## 7. Աջակցություն միգրացիայի ոլորտին ՄՄԿ–ի և ՄԱԿ ՓԳՀ–ի հետ

Իրականացվել է երկու ծրագրի միջոցով՝

ՄՄԿ՝ **€1.950.000** ՄՔՄՄԿ՝ **€1.150.000**

**ՆՊԱՏԱԿ**

**1.** Զինել միգրացիայի կառավարման հաստատություններն անհրաժեշտ ուղեցույցներով և կարողություններով՝ մշակելու և իրականացնելու միգրացիոն և փախստականների պաշտպանության համապարփակ, հավասարակշռված և ապացուցահեն քաղաքականություններ:
**2.** Ապահովել միգրացիայի և ապաստանի կառավարման համակարգերի ու ընթացակարգերի բարելավում՝ համապատասխանեցնելով դրանք միջազգային և ԵՄ լավագույն փորձին, այդ թվում՝ տվյալների կառավարման ոլորտում:

## 8. Աջակցություն Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումներին, II փուլ,

Իրականացման ժամանակաշրջան՝ **2024 - 2026**

Ընդհանուր բյուջե՝ **€1.700.000**

**ՆՊԱՏԱԿ**

**1.** Արդարադատության և հակակոռուպցիոն բարեփոխումների ամրապնդում
**2.** Քրեական արդարադատության համակարգի համապատասխանեցում եվրոպական չափանիշներին
**3.** Ռազմավարական քաղաքական երկխոսության խթանում
**4.** Կառավարման և հաշվետվողականության բարելավում

## 9. Աջակցություն իրավապահ և անվտանգության ոլորտի բարեփոխումներին

Իրականացման ժամանակաշրջան՝ **2023-2025**

Ընդհանուր բյուջե՝ **€2.222.222**

**ՆՊԱՏԱԿ**

**1.** Առաջ մղել անվտանգության ոլորտի բարեփոխումները՝ համաձայն ՀԸԳՀ–ով սահմանված առաջնահերթությունների և ԵՄ լավագույն փորձի, այդ թվում՝ արդյունավետ և թափանցիկ նոր Ներքին գործերի նախարարության ստեղծման միջոցով:
**2.** Ոստիկանության բարեփոխումների ռազմավարությունների իրականացում:
**3.** Միգրացիոն և ոլորտի փաստաթղթերի տրամադրման ծառայությունների արդիականացում: